«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայ-Ռուսական համալսարանի
գիտության գծով պրոռեկտոր
փ.գ.դ., պրոֆեսոր
Պ. Ս. Ավետիսյան
_____ 10 ____ 05 ____ 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

Աստղիկ Մովսեսի Մովսիսյանի «Մանկամահացության սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրները և իրավիճակի վիճակագրական վերլուծությունը (ՀՀ տվյալներով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ու «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության» հիմնախնդիրների ամբիոնների 2022 թվականի մայիսի 10-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 05-22):

Մասնակցում էին՝
Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Ներսեսյան Կարեն Վասիլիի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Ոսկանյան Մարիամ Համբարձումի**՝ տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ, «Էկոնամիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ, **Զախոյան Էլիզա Միքայելի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Կարապետյան Էդգար Գագիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Պետրոսյան Իրինա Բորիսի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության» ամբիոնի վարիչ, **Ավետիսյան Անի Գրիգորի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Մնացականյան Լիդա Արմենի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հակոբյան Էսթեր Աշոտի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հակոբյան Արմինե Արզումանի**՝ ավագ դասախոս, **Աղաջանյան Արմինե Վլադիմիրի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Գալստյան Անի Համլետի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Նաշիկյան Լիլիա Աշոտի**՝ դասախոս, **Պետրոսյան Հեղինե Գագիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Պետրոսյան Գարիկ Արմենակի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Կարապետյան Քրիստինե Գագիկի**՝ տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Տիգրանյան Վարսիկ Իշխանի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Սահակյան Մարիա Արմենակի**՝ տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մանկամահացությունը բնակչության կենսամակարդակը բնութագրող ժողովրդագրական և առողջապահական կարևորագույն ցուցանիշն է, որը պայմանավորում է բնակչության բնական շարժի և ծերացման գործընթացի միտումները: Ներկայումս ՀՀ բնակչությունը բնութագրվում է ժողովրդագրական ծերացումով և թվաքանակի նվազմամբ՝ պայմանավորված ծնելիության ցածր մակարդակով: Պաշտոնական վիճակագրական տվյալները վկայում են, որ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2010-2019թթ. տարեկան միջին հաշվով կրճատվել է 0.33 %-ով կամ շուրջ 10.0 հազար մարդով, իսկ ծնելիության ընդհանուր գործակիցը 2019թ. 2010թ. նկատմամբ 1000 բնակչի հաշվով կրճատվել է 1.6-ով կամ 12%-ով: Բնակչության ծերացման գործակիցը տարեկան միջին հաշվով բարձրացել է 2.6 տոկոսային կետով. եթե 2010թ. տվյալներով 15 տարեկանից ցածր 100 բնակչի հաշվով 60 և բարձր տարիքի բնակչության թվաքանակը կազմել է 72, ապա 2019թ. տվյալներով՝ 91, ինչը բնութագրում է ՀՀ բնակչության ծերացումը: Առկա հիմնախնդրին զուգահեռ հարկ է նշել, որ 0-14 տարեկան երեխաների մահացության մեջ զգալի տեսակարար կշիռ ունի մինչև մեկ տարեկան երեխաների մահացությունը՝ 2010թ. 74%, 2019թ. տվյալներով՝ 62%: Բացի այդ, ՀՀ-ում զգալիորեն նվազել է մեկ կնոջ հաշվով ծնվող երեխաների միջին թվաքանակը՝ պտղաբերության գործակիցը: Ուստի կարևորվում է մանկամահացության ցուցանիշի համալիր վիճակագրական ուսումնասիրությունը, որն էլ կնպաստի վերջինիս նվազմանը միտված միջոցառումների մշակմանը և իրականացմանը:

ՀՀ-ում անկախության տարիներից ի վեր մանկամահացության հիմնախնդիրների վերաբերյալ ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական տեսանկյունից չեն կատարվել համալիր վիճակագրական վերլուծություններ, հետևաբար ամբողջությամբ չեն ուսումնասիրվել մանկամահացության վրա ազդող սոցիալ-տնտեսական գործոնները և չեն բացահայտվել մանկական մահացության վրա մահվան հիմնական պատճառների

ազդեցությունը: Այս խնդիրների ուսումնասիրությամբ է պայմանավորված հետազոտության թեմայի ընտրությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության հիմնական նպատակն է ժամանակի և տարածության մեջ մանկամահացության ցուցանիշի և դրա վրա ազդող գործոնների վիճակագրական վերլուծության միջոցով մանկամահացության սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրների բացահայտումը և իրավիճակի վիճակագրական համալիր գնահատումը:

Այդ նպատակին հասնելու համար ատենախոսությունում դրվել և վճռվել են հետևյալ խնդիրները՝

- ✓ ուսումնասիրել մանկական մահացության գործակցի հաշվարկման մեթոդաբանությունը,
- ✓ ուսումնասիրել ՀՀ-ում մանկամահացության ցուցանիշի դինամիկան ըստ սեռի և բնակավայրի, բացահայտել զարգացման հիմնական միտումները,
- ✓ վերլուծել մանկամահացության ցուցանիշի սեզոնային տատանումները և դրա հիման վրա իրականացնել գիտականորեն հիմնավորված կանխատեսումներ,
- ✓ բացահայտել և վերլուծել մանկական մահացության պատճառների կառուցվածքային տեղաշարժերը ՀՀ մարզերում և ք. Երևանում,
- ✓ բացահայտել կյանքի առաջին տարում մահացածների թվաքանակի փոփոխության վրա մահվան առանձին պատճառների ազդեցության չափը,
- ✓ բացահայտել մանկամահացության, սոցիալ-տնտեսական և առողջապահական, բնապահպանական գործոնների միջև եղած փոխկախվածությունը,
- ✓ իրականացնել ՀՀ մարզերում և ք.Երևանում մանկամահացության և դրա վրա ազդող համալիր գործոնների վերլուծություն կլաստերային եղանակով:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսությունում առաջադրված խնդիրների լուծման նպատակով կատարված վերլուծությունների արդյունքները ունեն տեսական և գործնական նշանակություն, որոնցից գիտական նորույթ են հետևյալները.

- ✓ կիրառվել է մանկական մահացության և ֆետոինֆանտիլային կորուստների գործակիցների հաշվարկման տարբեր մեթոդներ և տրվել դրանց գնահատականը ՀՀ մարզերի կտրվածքով,
- ✓ ՀՀ-ում մանկամահացության սեզոնայնության բացահայտման նպատակով ուսումնասիրվել է մանկամահացության գործակիցն՝ ըստ ամիսների և դրա հիման վրա բացահայտվել մանկական մահերին նպաստող առավել վտանգավոր ամիսները,
- ✓ մանկամահացության տարածվածության մարզային նկարագիրը բացահայտելու նպատակով վերլուծվել է մանկական մահերի հիմնական պատճառների կառուցվածքն՝ ըստ ՀՀ մարզերի,
- ✓ ինդեքսային մեթոդի կիրառմամբ բացահայտվել է ՀՀ-ում կյանքի առաջին տարում բոլոր պատճառներից մահացած երեխաների թվաքանակի փոփոխության վրա մահվան առանձին պատճառների ազդեցության չափը,
- ✓ հիմնավորվել է մանկամահացության և դրա վրա ազդող գործոնների միջև եղած փոխկախվածությունները,
- ✓ բացահայտվել և առանձնացվել են ՀՀ այն մարզերը, որոնք ըստ ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական, առողջապահական և բնապահպանական գործոնների ձևավորում են առանձին կլաստերներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ և ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունում տեղ գտած հետազոտության արդյունքներն ու եզրահանգումները կարող են կիրառվել ներկայումս ՀՀ կառավարության ժողովրդագրական իրավիճակի բարելավմանը ուղղված ծրագրերի մշակման գործընթացում, առողջապահության ոլորտում, համապատասխան նախարարություններում, ապահովագրական ընկերություններում, ինչպես նաև դրանք կարող են տեղեկատվական նյութ հանդիսանալ տնտեսագետ-հետազոտողների, կենսաբանական, սոցիոլոգիական ու բժշկական ֆակուլտետների ուսանողների համար: Աշխատանքում կիրառված վիճակագրական մեթոդներն ու կատարված վերլուծությունները կարող են օգտագործվել ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից համապատասխան շրջանակներում իրականացվող հետազոտություններում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսության տեքստը շարադրված է 134 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Մանկամահացության վիճակագրական ուսումնասիրության տեսական և մեթոդական հիմունքները» գլխում** ուսումնասիրվել է մանկամահացությունն որպես ժողովրդագրական կարևորագույն ցուցանիշ, ինչպես նաև ներկայացվել մանկամահացության ուսումնասիրության զարգացման պատմությունը, մանկամահացության ու դրա ածանցյալ ցուցանիշների հաշվարկման մեթոդաբանությունը:

Ատենախոսության երկրորդ՝ «Մանկամահացության ցուցանիշի ուսումնասիրությունը ժամանակի և տարածության մեջ ՀՀ տվյալներով» գլխում ուսումնասիրվել է մանկամահացության ցուցանիշի դինամիկան ըստ սեռի և բնակավայրի, բացահայտվել զարգացման հիմնական միտումները, որն էլ հիմք է հանդիսացել ցուցանիշի կանխատեսման համար, վերլուծվել է մանկամահացության պատճառների կառուցվածքային տեղաշարժերը ՀՀ մարզերի և ք.Երևանի տվյալներով:

***Ատենախոսության երրորդ՝* «Մանկամահացության վրա ազդող գործոնների վիճակագրական ուսումնասիրությունը ՀՀ տվյալներով» գլխում** ինդեքսային մեթոդով բացահայտվել է կյանքի առաջին տարում մահացածների թվաքանակի փոփոխության վրա մահվան առանձին պատճառների ազդեցության չափը, վերլուծվել է մանկամահացության, սոցիալ-տնտեսական և առողջապահական, բնապահպանական գործոնների միջև եղած փոխկախվածությունը, իրականացվել է ՀՀ մարզերում և ք.Երևանում մանկամահացության և դրա վրա ազդող համալիր գործոնների կլաստերային վերլուծություն:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են որոշ թերություններ, որոնց մեջ կարևորում ենք առանձնացնել հետևյալները՝

1. Գիտական նորույթի առաջին կետում հեղինակը նշում է, որ իրականացրել է մանկամահացության գործակցի հաշվարկ տարբեր մեթոդներով, ինչը գիտական նորույթ համարել չի կարելի:

2. Ատենախոսության երկրորդ գիտական նորույթը ձևակերպված է հետևյալ կերպ. «*ՀՀ-ում մանկամահացության սեզոնայնության բացահայտման նպատակով ուսումնասիրվել է մանկամահացության գործակիցն ըստ ամիսների և դրա հիման վրա բացահայտվել մանկական մահերին նպաստող առավել վտանգավոր ամիսները*»: Ձևակերպումից պարզ է դառնում, որ հեղինակի կողմից ուսումնասիրվել է վիճակագրական շարքի սեզոնայնությունը: Սակայն, դա իրականացվել է հայտնի մեթոդների հիման վրա և կատարվածը պարզապես վարժություն է, որը չի պարունակում գիտական նոր լուծում կամ նոր բացահայտում: Հետևաբար, ներկայացվածը չի կարող համարվել գիտական նորույթ: Բացի այդ, հեղինակը մանկամահացության գործակցի սեզոնայնության հաշվարկի հիման վրա նշում է, որ «*մանկամահացության գործակցի միջին ցուցանիշի բարձր մակարդակ գրանցվել է հունիս և օգոստոս ամիսներին, ինչպես նաև գարնանը՝ ապրիլ և մայիս ամիսներին*»: Մինչդեռ Աղյուսակ 2.2.2-ում բերված ցուցանիշներից ակնհայտ է, որ նշված ամիսներին սեզոնայնության հստակ միտում չի դիտարկվում: Օրինակ, օգոստոսին գործակցի՝ տարեկան միջինից բարձր ցուցանիշ է արձանագրվել միայն 2019թ.-ին, իսկ 2018 և 2017 թվականների օգոստոսին գործակցի արժեքը փոքր է եղել միջին տարեկանից: Նմանատիպ խնդիր կա նաև ապրիլ և մայիս ամիսներին: Հետևաբար, տվյալները թույլ չեն տալիս հստակ սեզոնային գործոն բացահայտել, ինչը ևս փաստում է, որ երկրորդ նորույթը գիտական նորույթի տարրեր չի պարունակում:

3. Ատենախոսության գիտական նորույթների երրորդ կետում նշվում է հետևյալը. «*Մանկամահացության տարածվածության մարզային նկարագիրը բացահայտելու նպատակով վերլուծվել է մանկական մահերի հիմնական պատճառների կառուցվածքն՝ ըստ ՀՀ մարզերի*»: Սա նույնպես, ըստ էության, վերլուծական աշխատանք է, որը անհրաժեշտ էր իրականացնել թեմայի շրջանակներում, սակայն գիտական նորույթի որևէ տարր չի պարունակում:

4. Ատենախոսության 3-րդ գլխի 3.1 բաժինը նվիրված է «*մանկամահացության պատճառների վերլուծությանը*» (սրա մասին է նաև գիտական նորույթների 4-րդ կետը), որի իրականացման համար հեղինակը շուրջ 4 էջ հատկացրել է մանկամահացության

պատճառների քանակական գնահատման համար բանաձևերի ներկայացմանը: Սակայն, դրա կարիքը չկար, քանի որ բանաձևերի արդյունքը կարելի էր ստանալ Աղյուսակ 3.1.1-ի ներառված ցուցանիշների միջոցով՝ պարզապես 2019թ. ցուցանիշից հանելով 2010թ. ցուցանիշը: Հետևաբար, ստացված արդյունքը մանկամահացություն առաջացնող պատճառների գործակիցների (յուր. 1000 երեխայի հաշվով այդ պատճառից մահացածների տեսակարար կշիռը) փոփոխությունն է ժամանակի ընթացքում, այլ ոչ թե մահվան առանձին պատճառների ազդեցության չափը:

5. Ատենախոսության 3-րդ գլխի 3.2 բաժնում ներկայացվում է «*Մանկական մահացության և դրա վրա ազդող գործոնների փոխկախվածության վիճակագրական վերլուծությունը*», որի շրջանակներում հեղինակը կառուցել է մի շարք ռեգրեսիոն մոդելներ և դրանց միջոցով ուսումնասիրել է մի շարք գործոնների ազդեցությունները մանկական մահացության գործակցի վրա: Սակայն, հեղինակը չի ներկայացրել տվյալների որակական հատկանիշների ստուգման արդյունքները, ինչը կասկածի տակ է դնում ստացված արդյունքների արժանահավատությունը: Մասնավորապես, աշխատանքի նախորդ բաժիններից երևում է, որ մանկամահացության գործակիցը ունի վարընթաց տրենդ, հետևաբար այն ոչ ստացիոնար է: Մյուս փոփոխականները, օրինակ մայրանալու միջին տարիքը, կանանց ամուսնության միջին տարիքը, ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով և այլն, նույնպես ունեն տրենդ, հետևաբար ոչ ստացիոնար են: Այդպիսի ժամանակային շարքերով ռեգրեսիայի իրականացումը կհանգեցնի ոչ արժանահավատ արդյունքների: Հեղինակը չի ներկայացրել նաև մոդելների մնացորդների ախտորոշման թեստերը, որոնք անհրաժեշտ են մոդելների արդյունքների անշեղությունը գնահատելու համար: Ճիշտ կլիներ, եթե հեղինակը օգտագործեր, օրինակ, նույն ցուցանիշների աճի տեմպերը, որոնց դեպքում գնահատման արդյունքները տարբեր կլինեին, իսկ դրանց միջև փոխկախվածության գործակիցները՝ առավել արժանահավատ:

6. Էջ 15-ի վերջին պարբերությունում հեղինակը նշում է, որ բնակչության մահացության մակարդակի և կյանքի սպասվող միջին տևողության վրա ազդում են 4 գործոններ, ինչը լիարժեք չէ, քանի որ ներկայացված ցանկը լրիվ չէ: Բացի այդ, հայտնի չէ, թե որտեղից է հեղինակը եկել տվյալ եզրակացության, քանի որ հղումը տրված չէ:

7. Էջ 25-ում գծապատկեր 1.1.3-ով ավարտվում է 1.1 բաժինը, որը ոչ վերլուծված է, ոչ էլ հիմնավորված է դրա տեղադրումը, իսկ 1.1 ենթաբաժնի ամփոփումը բացակայում է:

8. Էջ 105-ում հեղինակը նշում է, որ հայտնի է կլաստերային վերլուծության 2 մեթոդ՝ աստիճանակարգային և k-միջինների մեթոդ, ինչն իրականությանը չի համապատասխանում, քանի որ կլաստերացման մեթոդներն են հիերարխիկ և ոչ հիերարխիկ մեթոդները, իսկ k-միջինների մեթոդը ոչ հիերարխիկ մեթոդներից ընդամերը մեկն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները բավականին լուրջ են:

Այդուհանդերձ, **Աստղիկ Մովսեսի Մովսիսյանի «Մանկամահացության սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրները և իրավիճակի վիճակագրական վերլուծությունը (ՀՀ տվյալներով)» թեմայով** թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են ութ գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով՝ **Աստղիկ Մովսեսի Մովսիսյանի «Մանկամահացության սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրները և իրավիճակի վիճակագրական վերլուծությունը (ՀՀ տվյալներով)»** թեմայով թեկնածուական ատենախոսությունը մասամբ է համապատասխանում ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն բարեհաջող պաշտպանության դեպքում արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական

աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Նիստի նախագահ՝
Հայ-Ռուսական համալսարանի
էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝ Է. Մ. Սանդոյան

Հայ-Ռուսական համալսարանի
էկոնոմիկայի և ֆինանսների ամբիոնի վարիչ,
տնտ. գիտ. դոկտոր, դոցենտ՝ Մ. Հ. Ոսկանյան

Հայ-Ռուսական համալսարանի
տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության
հիմնախնդիրների
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Ի. Բ. Պետրոսյան

Հայ-Ռուսական համալսարանի
տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության
հիմնախնդիրների
ամբիոնի ավագ դասախոս, տնտ. գիտ. թեկնածու՝ Գ.Ա. Պետրոսյան

Հայ-Ռուսական համալսարանի
կառավարման և բիզնեսի ամբիոնի
ամբիոնի դոցենտ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Մ.Ա. Սահակյան

Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Ռ. Ս. Կասաբաբովա